ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

,,18,, դեկտեմբերի 2019թ. N 59

ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի պահանջով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի դեկտեմբերի 27-ի <<Հայաստանի Հանրապետության 2019 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին>> թիվ 1515-Ն որոշումը, Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Եղեգնաձորի վետերանների խորհրդի և քաղաքացու դիմումները.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1.Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզպետարանի բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման <<Այլ նպաստներ բյուջեից>> հոդվածով նախատեսված ծախսերից սոցիալական աջակցության նպատակով Հայրենական Մեծ պատերազմի 6 վետերանների ամանօրյա տոների կապակցությամբ տրամադրել 20000-ական ՀՀ դրամ դրամական օգնություն՝ համաձայն հավելվածի: Գումարը փոխանցել «Արդշինբանկ» ՓԲԸ Եղեգնաձորի մասնաճյուղ՝ վետերանների խորհրդի 2475800179000000 հաշվեհամարին:

2. Վայք քաղաքի բնակիչ, 1-ին խմբի հաշմանդամ Հրայր Գևորգյանին տրամադրել դրամական օգնություն՝ համաձայն հավելվածի:

3.Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզպետարանի գլխավոր ֆինանսիստին՝ օրենքով սահմանված կարգով եռօրյա ժամկետում կատարել գումարի վճարում:

Ա.ԳՐԻԳՈՐՅԱՆ